

Բրիտանական ԱՅՍԻՍԸ

ՄԱՅՐ ԱՅՈՒ Ս. ԷՏԻՄԵՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՆԱԲԱԾԱԹԵՐՈ

Հարցազրույց Ամենայն Հայոց
Հայրապետի հետ

Մեծ պահք

Եկեղեցու վարդապետությունը
Նոր Կրակարանում

Բախմանական և սարկավազական
շեռնադրություններ



ՎԱՐԴԱՆԱՆՑ

ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՈԳԻՆ ՀՐԱՄԱՅՈՒՄ Է...

«Հայրենիքը աշխարհագրական, ազգագրական կամ լեզվախոսական էակ չի ունի, այլ պատմական էակ է, բարոյական մի անճաղարություն, որն ունի անցյալ և կամենում է հարստանալ ապագայում նույնպես... Այն անխաղաղություն է պատմությանը, որն անխաղաղություն է պատմությանը, որն անխաղաղություն է պատմությանը...»

Ռեդիկտ Պատմական (Յուրախյան) (նախագահ)

Այսօր, երբ մեզանում հաճախակի խոսվում է ազգային գաղափարախոսությունում ունենալու ծանրություն, մասին, եւ արվում են հարցեր ու պատասխաններ, որոնք շատ են հիշեցնում մանկան հավաքած բարիքներում կտրվող խնդրանքի, ակամա զարմանում են մի՞թե կորցրել ենք մեր հավաքական հիշողությունը, մի՞թե դադարել ենք պատմական ժողովուրդ լինելու առաքելությունում: Եւ շարունակում են զարմանալ զարմանալով վրա, իսկապես, ո՞րն են քա պատմությունները, այն հայերն, որում երեւում է քա հազարամյակների փորձն ու պատմությունը, գաւաճն ու կորցրածը:

Այս տարվա մարտի 3-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ինչպէս միշտ, ինչպէս դարձրել շարունակ, մեծ շուրջով նշեց Վարդանանք տոնը: Մեր եկեղեցու օրացույցում տեղ գտած այս տոնի ոգեկոչումը ոչ Վարդան գորավարին եւ ոչ էլ նրա 1036 մարտիկների հարկավոր չէ. մարդու համար անճարաւոր բանը կլանքը, նրանք չգիտէինք ինչ հանուն իրենց փառքի: Նրանց կատարած գործի փառաբանումը մեզ է պետք՝ ապրողներին, եւ այն էլ հենց ապրելու համար: Վարդանանք ճակատամարտը մեր կենսագրության ամենախառնակ էջերից մեկն է. բանգի այդ ճակատամարտը ուղղված չէր սուկ մեր մարմինը, ասել է պէ մեր ֆիզիկական գոյությունը Երեսնամյակում, այլ առավելագույնը մեր տեսակը, մեր հոգեւորական լինելությունը դարձրել մեզ էլ դարձրել վայել պահելուն:

Հայկական պետականությունը ջարդվեց, բաժանվեց երկու հզոր տերությունների միջև: Մտեղծված իրադրության մեջ վտանգ կար կու գնալու մի կողմից Բյուզանդիային

քրիստոնեության համընդհանրացումը ճանաչարհով, մյուս կողմից՝ Պարսկաստանին՝ բռնի կերպով զրադաշտականության տարածումով: Անկախությունը կորցրած ժողովրդի համար զրադաշտականության ընդունումը հավասարագոր էր կատարյալ մահվան: Առաջինը քրիստոնեությունը պետականորեն ընդունած ժողովուրդը, իր հանձնարել այդտեղի մտքի հեռագնա բռնիքների շնորհիվ, նույն համընդհանրացումը քրիստոնեությունից հասցրել էր իրենը անջատել որպես ազգային մտածողություն, ձեռն ու բովանդակություն ունեցող կրոնի իր հայատառ ու հայեցի, միանգամայն ինքնատիպ հոգեւոր-մշակութային դիմագծով: Իր ելույթում ու մտածողությանը խիստ համահունչ այդ դիմագիծը ձեռք բերած հայը չէր կարող արյան գնով անգամ չափել այն: Թեպետ Վալարայի ճակատամարտում չհաղթեցին հայերը, բայց եւ չպարտվեցին, եւ ճակատամարտը մեր պատմության մեջ գրանցվեց որպես ոգու անընկճելիության հաղթանակ, որպես արժանապատիվ ապրելու հրամայական:

Այս հրամայականը բեկորված էր ավելի վաղ՝ 301 թվականից, որին անուն ու ազգանուն, կենսագրություն՝ 451 թվականին այս հրամայականը կրկին հնչեցրեց ու վախճանեց Հայոց Եկեղեցին: Այս հրամայականը եղել է մնում է մեր եկեղեցու 1700-ամյա դարը:

Այս դասն այսօր եւ մեզ է պետք հայաստանաբնակներիս, բանգի առկա բազում գրկանքները, դժվարություններն ու հոգսերը կարող են խաթիւն մեր սիրտ ու հավատի պլուները, մրգանք մեր ճշմարիտ հիշողությունը: Ինքնամանաւանք ու ինքնահիշողության կորուստը չէ՝ արդյոք, որ մեզանում դեռ քիչ է մեր մարդիկ, որոնք կարողաւստ ունեն այն ժամանակների հանդէպ, որոնց բուն էությունը ինքնամանաւանք էր «Որտեղ էր կայ՝ այնտեղ կայ» ամոթալի ու նկատագրից փիլիսոփայությանն ու նույնքան ամոթալի ժառանգությունը: Ազգային մեզ այնամոլության շափիկ հագցնող այն մի կտոր «հեշտ» տրվող հասցը չէ՝ արդյոք, որ մեզանից վերցրել էր մեր ճշմարիտ անճաղարը՝ հազարամյակների մեր հիշողությունն ամբարեղծ 70-ամյա կենսագրության մեջ: Նույն ինքնամանաւանքն ու սեփական ավանդույթների կորուստը չէ՝ արդյոք, որ մեր օրերում լատինատառ գիրն ու օտարախոս լեզուն ու բարբրել իրենց «մի փոր հացը» փորձում են փոխել հազարամյակների մեր այնքան բանկ գնով ձեռք բերած անընկճելի «ինքնարժեքի» հետ: Ցավալի է, բայց փաստ, որ տարին

մեր շարունակ մեր ազգային ու անկախ հեռուստառադիոն մեզ, մեր պատմիկներին ու մանուկներին ազգային երգ ու երաժշտության, պոեզիայի, գիտական ու գեղարվեստական մտքի, ավանդույթների ու սովորությունների փոխարեն հրամայում են ցածրորակ ու անհասկանալի, մեր ոգու խորք ու անհարկ անմշակույթ «մշակույթ» կոչվածը, մեր եկեղեցական տոների, սրբոց հիշատակների փոխարեն՝ օտարաղական: Հիշե՛ք, քե ինչպիսի հետեւողականություն էին մեր պատմիկներին ու աղջիկներին պատրաստում տոները ինչ-որ տարբեր «կենտրոնի» հիշատակության օրը, սակայն Վարդանանք ոգեկոչման օրերին ասես դարձել էին խուլ ու համր: Մի՞թե անկախ պետություն ունենալ նշանակում է ոչ թե մեկ, այլ բազում օտար տերությունների ստրուկ դառնալ, ոչ թե մեկ եկեղեցի, մեկ ազգ լինել, այլ մասնավոր ու տարբարված բազում աղանդների, բազմակերպ, մեր ելույթում ու վարքագծին խորք մշակույթի լաբիրինթոսում:

Ազգային ոգու կերտումը բաղաձայնակարություն է, ազգային գաղափարախոսություն, ճակատամարտ՝ ուրիշի կասկածելի գաղափարներ չիղղվելու համար: Եւ այդ գաղափարախոսությունը հանճարեղորեն մշակել էին մեր փառապետները՝ պետություն-եկեղեցի փոխհարաբերություններում, որն, անգամ պետականության բացակայության պայմաններում, մինչեւ 20-րդ դար փայլուն իրականացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Նման համաձայնության հուսադրող մի դրվագի կականատես եղանք այս տարի, երբ մեր եկեղեցին Երուսաղեմում տոնում էր Սուրբ Ծնունդը: Տիրոջ Սուրբ Մատիի առջեւ Հայոց Հայրապետի ու հանրապետության նախագահի միակամ ու միասիրտ ծննդաբանում ասես մի պահ եւս տարալ դարձրել վարքագիծն ու տեսանկյունը՝ դարձրեց քրիստոնեության ընդունումն ու տոների գյուտը, լսելի դարձրեց Հայկերտին ու Բաղկերտի ժողովին տված «ոչ»-ի խրոխտամայն:

Գաղտնիք չէ, որ այսօր մեր եկեղեցին 70 տարվա մեջ ծնունդ հետ տալ այն շուկելու, իսկ պետությունն էլ ոտքի կանգնելու պետք ունի: Ուստի հարկ է, որ երկուստեք ձեռք ձեռքի տված աստար կանգնեն միմյանց: Դրա լավագույն օրինակները մեր ունեցել ենք մեր պատմության ընթացքում: Այդ օրինակներն են եղել մեր ազգային գաղափարախոսության լավագույն գրավականները: Հայրապետանք տարբեր հասակների ոգին հրամայում է...

ՄԱՍԻՆ ՀԱՊՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
վերադարձվ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին



Մարտի 3-ին Նորին Սրբառան Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոս, ավարտելով պաշտոնական անդրանիկ այցը Ռուս Ուղղափառ Եկեղեցի, վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Օղանակալայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը, Հայաստանում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին միաբանության անդամները:

«Տպվորված եմ Ռուս Եկեղեցու զարբերվել ու Ռուսաստանում առկա եկեղեցի-պետություն ջերմ հարաբերություններով, որն իր արտահայտությունն է գտնում ժողովրդի հոգեւոր կյանքում», - այցելության մասին իր տպավորություններն օղանակալայանում հայտնեց Վեհափառ Հայրապետը:

Մտվելայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի հետ հանդիպման ընթացքում երկու Եկեղեցիների պետերը հաստատեցին, որ շարունակելու են գորացնել ու ամրացնել այն դարավոր բարեկամությունը, որ գոյություն ունի Հայ եւ Ռուս Եկեղեցիների միջև: Ամենայն Հայոց կաթողիկոսը, ռուս պատրիարքին տալով Սբ. Էջմիածին փոխադրվելու այցի հրավեր, օգոստոս ամսին կրկին հրավիրեց Մտվելա՝ մասնակցելու Սբ. Ամենափրկիչ տաճարի օծմանը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց նաեւ ՌԴ նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինի հետ ունեցած հանդիպումը եւ վերջինիս կողմից արված այն հաստատումը, որ Ռուսաստանը լինելու է Հայաստանի կողքին:

Անդրադառնալով այցելության արդյունքներին՝ Նորին Սրբառան Մայր տաճարում ներկայացրեց ռուս պատրիարքի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները երկու Եկեղեցիների հիմնականությունների վերաբերյալ: Եւ աստվածաբանական ոլորտների ու խնդիրների շուրջ հանդիպումների կազմակերպման վերաբերյալ:

Նորին Սրբառանը իր ջերմագին շնորհակալությանը ուղղեց օրես Մայր տաճարում օծված եւ ձեռնադրված հոգեւոր սպասավորներին:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆ Ամենայն Հայոց կաթողիկոսի անվանակոչության պոն

Մարտի 2-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնեց Սբ. Վարդանանք՝ 451 թ. համուն սեփական հավատքի պահպանման եւ հայ ժողովրդի լինելության համար Ավարայրի ճակատամարտում նահատակված Վարդան գորավարի եւ բոլոր 1036 մարտիկների տոնը: Հայոց բոլոր եկեղեցիներում մատուցվեց Սբ. Պատարագ: Վարդանանք տոնի օրը նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի անվանակոչության օրն է: Հավարտ Սբ. Պատարագի տեղի ունեցավ հայրապետական մատարանը:

ՄԱՍԻՆ ԳԻՐԱՆ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԲԱՐՉՈՒՆԻՔ ՏՆՆՈՂ ԴԱՆԱՊԱՐԿԻ ՄԵԿՆԱԿԵՏԻ ՈՒ ՀԻՆԳ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Անառակի կիրակի - մարտի 19

«Ընդ անառակին որդոյ գո-
չինք առ Հայոյ գրած. մեղաք
խրկինս առ առաջի ըն թախի
խրկանաց. ել ընդ առաջ սիրով
գրկես համարիքի՝ մարդս գնեզ
ի մեղաց մերոց»:

Շարակոնց

Մեծ պահքի երկրորդ կիրակին
կոչվել է Անառակի: Այդ կիրակիի
անվան հիմքում ընկել է Նոր
Կտակարանում արձանագրված,
Հիսուս Հրիստոսի անվանված,
«Անառակ որդու» առակը (Լուկ.,
ԺԵ, 11-12):

Այդ առակի համաձայն՝ ոմն
անձատուն երկու որդի է ունենում:
Նրանցից կրտսերը, հորից իրեն
հասանելիք ժառանգությունը
պահանջելով, հեռանում է հայ-
րական տնից: Ծառ կարծ ժա-
մանակի ընթացքում օտար երկր-
ներում սկսում է ձուլալիկի չար-
քաշ կյանք վարել: Որոշ ժամա-
նակ անց նա, անընդունալով
իր կյանքի ընթացքին, հիշում է.
«քանի՞ վարձով աշխատավոր-
ներ կան իմ հոր տանը, որ առա-
տա հաց ունեն, և ես այստեղ կորչում
եմ» (Լուկ., ԺԵ, 17):

Երկար խորհուրդ հետո նա, իր
պապակի հոգեւոր ուժ գտնելով,
վեր է կենում, գալիս հոր մոտ և
ասում. «Հա յո, մեղանշեցի երկն-
քի և թո առաջ, այնչես արժանի
չեմ որդիդ կոչվելու»: Իսկ հայր-
ը, որ գրգռվ ընդառաջ էր վա-
զել որդուն, իր անչափ սիրով մո-
ված՝ ներում է նրան և կրկին ըն-
դունում իր հայրական հարկից
ներս, փ մրա այդ «որդին մեռած
եմ և կենդանացավ, կորած էր և
գտնվեց»:

Տերունավանդ այդ առակի
նշանակությունն այն է, որ մենք,
բնեւ մեր պատկերահամցու-
թյան ու մեղքերի պատճառով հե-
ռացվում Աստուծոյ, սակայն եր-
կար չենք կարող գոյատևելու
առանց Նրա կեցողիքի ներկայու-
թյան, ուստի եւ անկեղծորեն զո-
ջալով ու Բարձրաշխ Աստուծո հան-
դիպ մեր գործած հանցանքներն
ընդունելով՝ պետք է մեր տկար
հոգիներում ուժ գտնենք (ինչն
անկասկած կա, քանի որ Աստ-
ված Իր պաղկեղծով ու մեղադ-
րության տանդեմ մարդու մեջ ի
սկզբանե դրել է Իրեն փնտրելու
և դեպի Ինքը գնալու թե՛ ցանկու-
թյունը և թե՛ ուժը) և հաստա-
տուն Քալեփաղով գնալու տուրք եկե-
ղեցի՝ Աստու կենդանի տաճար,
և հայցենք Նրա գործությունն ու
մեղադրությունը, մանավանդ
Մեծ պահքի այս շրջանում:

Ի վերջո, եթե անառակ որդու
մարմնավոր հայրը այդքան ու-
րախացավ, երբ իր «մեռած որ-
դին կենդանացավ», ապա որ-
բա՞ն երջանիկ կլինի մեր երկ-
նավոր ու Հոգեւոր Հայրը՝ մեր
իսկ Արարիչը, եթե մենք ապաշ-
խարենք ու ընդունենք, որ միայն
Նրա օգնությամբ կարող ենք
ձերբազատվել մեր խղճի ծաղ-
կունճերից ու Երկնային արքա-
յության հավիտենական ուրա-
խության ժառանգակից լինել:

Անառակի կիրակիին ընթերց-
վում են ճաշու հետևյալ սուրբ-
քային հատվածները՝ Ես., ԾԴ,
11-17, ԾԵ, 1-13, Գ Կորնթ., 2,
1-18, Է, 1, Լուկ., ԺԵ, 1-32:

Տնտեսի կիրակի - մարտի 26

«Որ տիրապէս մեծապիւն
սրտեղծի երկրորդ աշխարհի
զգալի եւ ի դրախտն որ յաղնի
տրուես եղաւ գնարդն առա-
ջին...»:

Շարակոնց

Մեծ պահքի չորրորդ կիրակին

ՆԵՐՍԵՍ ԱՐԲ ՊՈԶԱՊԱՆՅԱՆ

ԵԿԵՂԵՅՈՒՎԱՆԻ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Նոր Կտակարանի մեր ունե-
ցած բոլոր գրվածքներն,
իհարկե, ստեղծվել են Հիսուսի հա-
րությունից հետո, ու դրանցում բո-
լանգրված աստվածաբանություն-
ն էլ, քննակամաբար, տեսանելի է
դառնում այդ իրադարձության լույ-
սի ներքո: Դրանք գրվել են առաջին
դարի քրիստոնյաները, որոնց միա-
վորում էր ընդհանուր հավատն առ
Հրիստոսին: Բայց մինչ այդ կար
մեկ այլ կարգի քրիստոնյա հանրու-
թյուն: Այն առաքելությունը, որ Հի-
սուսը սկսեց Հուդայում և Գալիլիա-
յում, հանգեցրեց առաքյալների
ընդունության և հետո այն բանին,
որ նրան ճանաչեցին որպես փրկիչ:

Ի տարբերություն թաղաքական-
կան աղանդների կամ Նախաձեռ-
նողների կազմակերպության՝
քրիստոնյա հանրությունը համար-
ված էր հայտնաբերված, որ «Նա,
ով պետք է գար» (Լուկ., Է, 20), էլի
է: Հրիստոնյաների այդ հանրու-
թյունը այդպիսով ակնկալում էր
Նրա՝ Հիսուսի, վերջնական ու հաղ-
թական վերադարձը:

Հարությունից հետո միակ գր-
վածքը, որ օգտագործում է
«Ecclesias» (եկեղեցի) բառը, Մատ-
թեոսի Ավետարանն է: «Եկեղեցի»
նշանակում է կազմակերպված, մե-
նավորված կրոնական խումբ, որը
կարող է վերաբերել ողջ Իսրայելին,
Աստուծո համայն ժողովրդին, որնեւ
տեսությանցված մանկանքի և կամ
այն վայրին, որ գտնադրվում են հա-
վարեն:

Հիսուսը հուդայականությունից
տարանջատվող որեւէ բան չէր
կազմակերպում. Նա սուկ իր ընտ-
րյալ աշակերտների հետ հարողա-
կիչ էր լինում Հոգու շնորհից, որի
միջոցով մարդիկ պիտի տեսնեին,
որ եկել է Աստու Արքայությունը:
Այս խումբը մնալ էր մարդկային
հավատարմի վերապալուի, դա ճշ-
մարիտ Իսրայելն էր, որ Իսրայել-
ը: Ժամանակակիցները բոլոր ըն-
թեմում ունենին Հիսուսի փրկչական
տեսությունը և թաղաքական, եւ
հոգեւոր մեկնաբանության մասին:
Այս իսկ պատճառով որեւէ իշխա-
նավորները նրա սպանեցին՝ որ-
պես Աստուծո հայտնողի, իսկ հռո-
մացիները՝ ապստամբների առաջ-
նորդի: Իսկ Նա իր փորձիկ հոտին
մանից առաջ խոստացավ (Լուկ.,
ԺԲ, 32), որ իր քաղաքությունում
նրանք տանաբերելու արդյ կարգա-
նեն, «որ ուտեք և խմեք իմ սեղա-
յան, իմ արքայության մեջ և նստեք
տասներկու գահերի վրա՝ դատելու
Իսրայելի տասներկու ցեղերին»
(Լուկ., ԻԲ, 30): Դա մեծուհի կողմից
տրվող տարօրինակ խոստում էր, եւ
նրեւ Նա մահացավ, աշակերտները
հիպոստասություն քաղեցին: Սա-
կայա Նա, ինչպես խոստացել էր,
բոլորն էր Հոգին: Եւ Եմմաուսի ճա-
նապարհին աշակերտները Նրա
մասին խոսում էին որպես մեկի, ով
պիտի «փրկեր Իսրայելը»:

Մենք տեսնում ենք, թե հոգեգալ-
տից ի վեր ինչպես է Սուրբ Հոգին
գործում միավորելով հավատա-
ցյալներին մեկ եղբայրության մեջ,
ուստիս ար. Պողոսը «syn» («համա»)՝
միասնականությունը ցույց տվող
նախաձեռնող ստեղծեց նոր բառեր
(Գաղ., Գ, 20):

Եկեղեցու՝ որպես նոր Իսրայելի
գաղափարի հիմք կարելու է: Շա-
տեմ այն ընդունեցին որպես մի-
այլ կերպափոխված Իսրայել, բայց
դա առավել բան այդպես է: Հին Իս-
րայելի՝ Աստուծո մեծությունը գրկեց
նրան Իսրայել կոչվելու իրավուն-
քից: Որպես «Լրբանություն որդիներ»՝
քրիստոնյաները եւ Ալանս են, եւ
Իսահակը, ասել է թե՛ ճշմարիտ
մարդկությունը եւ ճշմարիտ Իսրա-
յելը: Հին Իսրայելը մահացել էր, եւ
Եկեղեցին նրա հարությունը առած
ձեռն է: Եկեղեցու համար մինչեւ աշ-
խի վախճանը, մինչեւ Հրիստոսի
գալուստը, երբ անեն բան կուենա
իր ավարտը, հարությունը չի հաս-
նելու իր ողջ լրմանը:

Նոր Կտակարանում Եկեղեցին մի
տեսակին համայն է, և հավատա-
ցյալների ողջ համայնքը: Բոլորն էլ
միմեություն թագավորության մասն
էին, բոլորն էլ մեկսուրմ էին Հրիս-
տոսի մահվամբ ու հարությանը, քո-
ւորն էլ, որպես Տիրոջ, դավանում
էին Հիսուսին: Եկեղեցին ընդհա-
նուր հավատով միավորված մի հա-
տարակալություն էր, բայց ինչպես որ
հոգեւոր էր, նույնպես եւ գոտ
մարդկային, հետեւաբար կային
անհամաձայնություններ և պա-
ռալություններ: Այս ղեկավարյուննե-
րի եւ Հրիստոսի բնության մասին
բոլոր ընդունումների լուծման ճանա-
պարհին էլ առաջ եկավ Եկեղեցու
գաղափարությունը:

Սուրբ Հոգին պարզեցվել էր հա-
վատացյալներին՝ նրանց տալու տր-
բություն՝ այն, ինչի համար եւ կան-
գել էին Աստուծոյ, և որպես նրանց
արքայության մեջ Հոգու հավիտե-
նական կարգի նշան: Արքայություն-
ը եւ եկել էր, եւ դեռ պիտի գար, եւ
Եկեղեցին էլ Սուրբ Հոգու ժամանա-
կավոր տաճարն է: Հավատարմի
քրիստոնյաները Հոգու գործարար
էին լցված, եւ Եկեղեցին Հիսուսի
չնորհն ու Աստուծո սերը լիակա-
լություն էր իրար Սուրբ Հոգու միու-
թյամբ:

Սուրբ Պողոսի ամենամեծ նպաս-
տը Եկեղեցու վարդապետությանը
Եկեղեցու՝ որպես Հրիստոսի մարմ-
նի գաղափարն էր: Նոր Դաժակու-
թյան ճանապարհին Հիսուսը հանդի-
պեց Պողոսին, հարցրեց. «Ինչո՞ւ ես
հալածում իմե՞ս» (Գորք., Բ, 4): Էս-
տին որ քրիստոնյաները Տիրոջ հետ
մի արժողություն էին, ուստի Պողո-
սը, նրանց հավանելով, Տիրոջն էր
հալածում: Պողոսի բողբոսում շատ
գուցահեմներ կան, որ ցույց են տա-
լիս հավատի միությունը. «ես խաչ-
վում եմ Հրիստոսի հետ, եւ այնչես
նա չէ, որ ապրում եմ, այլ Հրիստոսն
է, որ ապրում է իմ մեջ» (Գաղաթ., Բ,
20):

Սերը մեղքի գերիշխանությունից
մարդկային բերեց նոր Տիրոջ Հի-
սուս Հրիստոսին հնագույնությունը:
Մարմինը կարող է իմեն իմեն չինել
Սիրո մեջ (Եփես., Գ, 16), որովհետեւ
նրա անդամները հարմարված մի-
ացած են իրար և մերդաշնակված
գլխին: Հրիստոսի հետ (Եփես., Գ, 15):
Նույնաստիպ գաղափար կա Պողոս.
Ա-19-ում, որ ս. Պողոսն ասում է.
«Աստվածությունը արժողությունը
հաճեց բնակվել Նրա մեջ»: Աստ-
վածային բոլոր հատկություններն ու
Աստու գործությունները Հրիստոսի
մեջ են: Կողմնակցները կարծում
էին, որ կան Աստվածությունից
դուրս գտնվող գործություններ, բայց
նրանք իրար և մերդաշնակված է-
լին: Ս. Պողոսը մեզ հիշեցնում է.
որ մենք Նրա մեջ ենք, ով գլուխն է:
Եկեղեցին, որ Հրիստոսի մարմինն
է, շարունակ Հրիստոսից ընդունում
է այն արժողությունը, լիկություն-
ը, որ Նա տեսնում է Հորից: Այս
գաղափարը կրկնվում է Եփես.,
Գ, 17-19-ում, որ ար. Պողոսն արդ-
յուն է, որ Հրիստոսը քնակվի
նրանց սրտերում, որպեսզի նրանք
«ունենան կարողություն հասկանա-
լու բոլոր սրբերի հետ, թե ինչ է յայ-
նությունը եւ երկայնությունը եւ բարձ-
րությունը եւ երկայնությունը առա-
վելությունը, որպեսզի լցվեն Աստու
մարդոջ լիկությունը»:

Հրիստոնյաներն ակնկալում են
վախելու Աստու լիկությունը, որը
Հրիստոսի մեջ է: Բայց սա հնարա-
վոր է միայն այն դեպքում, երբ
նրանք դառնում են Մարմին, այսին-
քի՝ Եկեղեցու անդամներ: Բ, Կորնթ.,
Ա, 4-7-ում եւ Պողոս Ա, 24-ում,
որոնք պետք է դիտել միասին, Պո-
ղոսն ասում է, որ Հրիստոսի կյանքը
լցվում է իր մարմնի մեջ: Սա վերա-
բերում է ոչ թե մարմնի եւ գլխի մի-
ջե՝ եղած հարաբերություններին,
այլ մարմնի եւ արժանանքին: Ս. Պո-
ղոսն ասում է, որ ինչպես Եկեղեցին
է չարչարակցի Հրիստոսին, այն-

պես էլ իմեն է որպես՝ մասնակցելու
այն չարչարանքներին, որ պիտի
հասնի իր կողոսացի եղբայրներին:
Որպես Ավետարանի սպասավոր
նա պետք է հորդի մի կենսատու
վատ, որով քրիստոնյաները «կա-
րող են լցվել Աստու մարդոջ լի-
կությամբ» (Եփես., Գ, 19): Այս գործ-
ընթացը, որով եկեղեցին կարող է
ձեռք բերել Հրիստոսի լուրջությունը,
հասնում է մինչեւ այն ժամանակը,
երբ Աստված պիտի «ամեն ինչ բո-
վանդակի Հրիստոսով» (Եփես., Ա,
10): Հրիստոսի փրկագործությունը
ամեն ինչ հաշտեցրեց իր հետ խա-
ղաղություն գործելով՝ Կաշի
արքայ» (Կողոս., Ա, 20): Աստված
Նրան հարություն տվեց մեղեկնե-
րից եւ Նրա համարձակման ժամա-
նակ՝ «ամեն ինչ որպես Նրա ոտքերի
տակ» (Եփես., Ա, 22): Եկեղեցին
գործակալ է, որով Հրիստոսի
առաջնորդությունն ամբողջապես
արդյունավետ է դառնում: Նրա
հարաբանակ պետք է հոշակվի, «որ-
պեսզի այն հայտնի լինի իշխա-
նություններին եւ պետություններին,
որ երկրում է Աստու թագապա-
տիկ իմաստությունը» (Եփես., Գ,
10):

Այժմ Եկեղեցին կարող է արդյուն-
վանաճաճ, որովհետեւ իր անդա-
մը՝ մեկ հոգով մեկ մարմնի մեջ
են մկրտված... և բոլորն էլ այն մեկ
հոգին լսեցին» (Ա, Կորնթ., ԺԲ, 13):
Հոգու միջոցով մենք Հրիստոսի հա-
րության խոյան ենք փայլալույս:
Մենք ճաշակում ենք Նրա հարու-
թյան մարմինը, և այն կյանք է տա-
լիս մեր մարմններին, որոնք մի են
Նրա մեջ, «Երբ մեր մեջ բնակված
է Նրա հոգին, Ով հարություն տվեց
Հիսուսին մեղեկներից, ապա կկեն-
դանացնի ու ձեր մահկանացու
մարմնները մեզ մեջ՝ բնակվող Իր
Հոգով» (Հռոմ., Ը, 11):

Պողոսը մարմնի գաղափարի իր
գործածությունը մեզ պարզ փոխա-
բերությունից հեռանում է: Հրիստո-
նյաներն իրականում Հրիստոսի
ժառանգ են, Նրա մարմնի և կամքի
գործածական արտապայությունը,
Նրա ձեռքերն ու ոտքերն (Ա, Կորնթ.,
ԺԲ, 20), Սուրբ Հոգու շունչ՝ մարմ-
նի մեջ (Ա, Կորնթ., ԺԲ, 12-13): Մար-
մինը Հրիստոսն է, բայց նաեւ
Հրիստոսը մարմնի գլուխն է (Ա,
Կորնթ., ԺԲ, 3): Հրիստոսը մարմնի
մարմն է, կամքը և նաեւ համայն
մարդկության վրա իշխողը: Մարմն-
ն աճում է և կատարելապես
աճած էլ լինի, մինչեւ չիսանի Աստ-
ու մարդոջ լիկությանը (Եփես., Գ,
19): Սուրբ Հոգին տրված է չինելու
համար Եկեղեցին, այսինքն՝ մար-
մինը, «մինչեւ մենք բոլորս հասնենք
հավատի միության եւ Աստու Որ-
դու ճանաչման, կատարյալ մար-
դու սասնահանին՝ Հրիստոսի լիկ
հասակի շափու» (Եփես., Գ, 13):
Մարմինը պետք է մեկ լինի՝ ըստ
ամենայնի գործելու համար, բայց
անհամաձայնություն կա անհատների
միջեւ (Ա, Կորնթ., ԺԲ, 12 եւ այլն):
Չկա նախապայարկություններ ճեղի,
դասակարգի եւ սեռի հարցում:
Սրանք բոլորն ապրում են հեղա-
րության նոր հոգով՝ որպես նույն
մարմնի տարբեր անդամներ՝ յուրա-
նայնությամբ իր սեփական դերով
(Հռոմ., ԺԲ, 4 եւ այլն):


Նորկապարանյան ժամանակ-
ների Եկեղեցին Աստուծոյ փառա-
քանելու եւ ծառայելու համար էր,
վկայելու Աստուծո սիրո մասին մեղ-
քի եւ առեղծություն աշխարհում
Հայտ. Ա, 16): Եկեղեցին մի հանրու-
թյան էր Հաղորդության մեջ, եւ
քրիստոնյաներն իրենց պետք է մա-
ուցեցին որպես «կենդանի գոհ»
(Հռոմ., ԺԲ, 1): Նրանք պետք է ապ-
րեն փոխաբերումի կյանքով՝ քայլի
գործելու համար ողջ մարդկության
(Ա, Տիմոթ., 2, 18):

Եկեղեցու միջոցով Աստված
ստեղծում է եւ փրկում: Եկեղեցին
աշխարհում Սուրբ Հոգու արտա-
հայտությունն է՝ սնված Հրիստոսի
Մարմնով և Արքայով:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1994-1999 թթ. սովորել է Սեւա
Վազգենյան հոգեւոր դպրանոցում
1999-ից սովորում է Գեորգյ
հոգեւոր ճեմարանում:

Հրանդ տրկ. ԿՈՍՏԱՆՅՈՒՆ
Գեորգյան հոգե
Դպրանոցի



ԲՐՈՒԿԼԵՆՅԱՆ ԳՈՒՇԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սկիզբը՝ նախորդ համարում
Կողմնակիցները Ռասեյին տվեցին «Լավողիկյան պատգամաբեր» անունը ակնարկելով Հայտնության գրքում հիշված Լավողիկյան հրեշտակին (Հայտն. 3.14), որը վերջինն էր։

Նրա հայտնի մարգարեությունն այն մասին, թե «միլիոնավոր մարդիկ են հիմա ապրում, որոնք մահ չեն ճաշակելու», սուտ դուրս եկավ, քանի որ աշխարհի վախճանի իր ուզած օրը չեղավ, եւ ինչպիսի բացատրություն էլ տրվի, միեւնոյն է, համոզիչ չի լինելու։ Նա չէր հավատում, որ այդ օրը պիտի հետաձգվի, չէր ուզում իր վրայից այդ ծանր լուծի հաջորդների վրա գցել եւ վատահ էր, որ վախճանը լինելու է իր կյանքի ընթացքում։

Նույնիսկ բացարձակ հակապատկերներն ու սուտ մարգարեությունները չկասեցրին նրան։ Մարգարեության չիրականացումը միշտ կարելի է մի որեւէ պատասխան գտնել կամ որեւէ բացատրություն տալ, այն էլ այնքան համոզիչ, որ մարգարեությունը կսկսի կորցնել իր սկզբնական իմաստն ու ամենիշխական ճշմարտությունը՝ տեղը զիջելով «շարունակական» իր գործընթացի, որի վերջը չի երևա։ Այս շարժման ամեն մի դեպքում, առաջնորդվելով այդ սկզբունքով, իրենցից հեռացրեց վախճանի կատարումը՝ բողոքելով խնդրի լուծումը իր հաջորդին։

Ռասեյականությունը գուտ «տրամաբանական» բայերի միջոցով 1799 թվականը հռչակեց որպես աշխարհի վախճանի սկիզբ, հետո այն տեղափոխեց 1844, այնուհետեւ 1874, ապա՝ 1918, 1925, 1975 եւ այլն, եւ այլն։

Եւ բոլոր այդ դեպքերում նրանք նկարագրեցին, պարզաբանեցին, բացատրեցին, ներկայացրեցին եւ ինքնավերջին այդ բովանդակների մարգարեական լինելը։ Այս է ռասեյական ձեռագիրը, որին ցայսօր հավատարմ են նաեւ հետեւորդները։ Մի դեպքում սակեց, որ այդ բովանդակը Քրիստոսի հոգեւոր ներկայության սկիզբն է, մի ուրիշ դեպքում՝ դատաստանի սկիզբը, կամ այսօրվա տերմիններով՝ նախաբանական շրջանը։ Այնուհետեւ ներմուծվեց հունգարի սկզբնոր գաղափարը, հետո՝ հունգար, հասկնալի, հասկնալի կապելը եւ նոր միայն Հիսուսի գալուստը, ներկայությունը կամ Վախճանը, որը տեղի կունենա, երբ ավարտվի նախաբանությունը եւ այլն... (Տեղին է այստեղ հիշել, որ Ռասեյի հաջորդը մասնագիտությամբ դատավոր էր եւ դատական վարական տերմիններով հեղեղեց ռասեյական շարժման աստվածաբանությունը)։

1917 թվականից սկսած՝ Հիտլերի նախագահի եւ ընտրվում դատավոր Ռուտերֆորդը։ Նա ծնվել է 1869 թվականին Միսսուրիի Ռախանգի Բուկլեյ քաղաքում՝ բողոքական ընտանիքում։ Մասնագիտությամբ իրավաբան Ռուտերֆորդը հետաքրքիր էր իր զբաղմունքով, որը ձգտում էր համալրել հայագի հետեւորդներին։

Իրական (տոտալիտար) կազմակերպություն, որ աշխարհում իրականացնում էր դատապարտելի, իսկ այդպիսի անդամները հեռացվում էին կազմակերպությունից։ Նա շարունակեց իր նախորդի գործը եւ 1917 թվականին հրատարակեց Ռասեյի երկերի վերջին յոթերորդ հատորը։ Ինքը դատապարտ Ռուտերֆորդը, գրական ասպարեզում պակաս բեղմնավոր չեղավ, իր բազմաթիվ գրքերն ու գրություններով նա շարունակեց Ռասեյի գործը։ Այսօրվա իր հրապարակեց երեւ Ռուտերֆորդի «Երկերից»՝ համեմատված վերջին պատմական, գիտական «հայտնագործություններով»։

Ելնելով Եսայի 33.10 համարից, որ ասում է «Իմ վկաներս դուրս եր, նաեւ իմ ընտանիքս», նա 1933 թվականին «Հիտլերի ընկերությունը» կնքեց «Եհովայի վկաներ» անունով։

Ռուտերֆորդի ժամանակ Եհովայի վկաները սկսեցին բշտակական եւ անհանդուրժող դիրք գրավել բոլոր եկեղեցիներին ու իրոնական հարանվանությունների նկատմամբ՝ որակելով բոլորին որպես սատանայական։ Նրա ժամանակ էր, երբ պարտադիր համարվեց տներ այցելել եւ ավտոարանելու թյան այդ «պլաններն» իրազեկելը։

Նա իր մահկանացուն կնքեց 1942 թվականի հունվարի 8-ին։ Ռուտերֆորդին հաջորդեց Նաբանայե Նորը, որը շարունակեց իր նախորդների երկու «Ռ»-երի գործը, այն տարբերությամբ միայն, որ ինքը, գրչի հետ սեր չունենալով, ոչինչ չէր գտնում, ինչպես նախորդ երկուսը։ Այդ իսկ պատճառով նրա օրոք Հիտլերի անդամները սկսեցին հրատապակվել անտոքագի, անհեղինակ ամեն իրավունք վերապահով կազմակերպության նախագահին։

Նորը մահացավ 1977 թվականին։

Նաբանայե Նորին հաջորդեց Ֆրեդերիկ Ֆրանցը, որը կազմակերպությունը դեկտեմբերին մինչեւ 1992 թվականը։ Ֆրանցի օրոք ավելի խիստ ու կուռ կառուցվածքային որոշումներ ընդունվեցին, եւ դա բնական է, քանի որ մոտենում էին նախորդ նախագահների մարգարեական գուշակությունների ժամանակները, եւ այդ ամենից անկախ պատճառ էր պահել Եհովայի պետություն-կազմակերպությունը։

Այսօրվա նախագահն է ծեղունի Միլտոն Էնչելը, որը հավանաբար պիտի պատասխան տա կամ բացատրի, թե ինչու իր նախորդների մարգարեությունները չիրականացան։

Այս է մեր տները ներխուժող «Միջազգային քրիստոնեական կազմակերպություն» անունը հորդորող պիոներների համառոտ կենսագրականը, կազմակերպություն, որը ձգտում է համալրել հայագի հետեւորդներին։

Ս. ՄԱՅԻՆԵՐ
Հոգեւոր ճանապարհի դասախոս

ԱՆԵՐԵՒՈՒՅԹ ՊԱՏԵՐԱԶՄ

ՈՐԻ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ Ե ԵՐԱՆԱՀԻՇԱՍԿ ԾԵՐ ՆԻԿՈՂԵՄՈՍ ԱԳՈՐԻՏԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)
Բացահայտ մեղավորն ավելի հեշտ դեպքի բարձր կողմնա, քան մտայնա մեղավորը, ու ծածկված է արտաքին առաքիճության քողով։

Այժմ, հատկապես պարզորոշ իմանալով, որ հոգեւոր կյանքն ու կատարելությունը միայն տեսանելի առաքիճությունները չեն, որոնք մասին ասացինք, իմացիք նաեւ, որ դրանք դրսեւորվում են միայն Աստուծոն մեղմեցնելու եւ միայն Նրա հետ միանալով (ինչպես ասվեց սկզբում), որի հետ կապված կայանում է արտի խառնովանությունը Աստուծո հորանմարության ու մեծության համեմատ, եւ գիտակցվում են մեր սեփական ոչնչությունն ու ամենայն չափի հանդեպ հակվածությունը, սերն առ Աստված եւ սեփական անձը չսիրելը, հնազանդությունը ու միայն Աստուծո, այն բոլորն արարածների նկատմամբ համոն Աստուծո սիրուն, մեր սեփական կամքի լրիվ մերժումը եւ կատարյալ հնազանդությունը Աստուծո կամքին, եւ որ ամենակարգիւրն ու այդ բոլորի ցանկությունն ու կատարումը մարդը ստույգ, Աստուծո փառքի համար (Արթուր, Ժ, 31), միայն Նրան գոհացնելու համար, միայն այն բանի համար, որ Նա Ինքն է այդպես ուզում եւ որ այդպես է հարկավոր սիրել Նրան եւ աշխատել Նրա համար։

Սա է սիրո օրենքը՝ գրված Աստուծո Աշով, իր հավատարմի ծառայությունից։ Սա է ինքնամոռացությունը, որը պահանջում է Աստված մեզից։ Սա է Հիսուս Քրիստոսի քաղցր լուծը եւ Նրա բերել բերը։ Սա է Աստուծո կամքին հնազանդվելը, որը մեզից պահանջում է մեր Քաղցին ու Ռուտիցը՝ եւ իր սեփական օրինակով, եւ իր խոսքով։ Քանզի մի՞թե չպատկերեց մեր Ղեկավարն ու մեր փրկարարը Կատարողը՝ Տեր Հիսուս, երկնային Հորն ուղղված իր աղոթքում ասել։ «Հա յր մեր... Բն կանք բոլ լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է» (Մատթ., 2, 10)։ Եւ Նա Ինքը, մտ-

նելով չարարանաց սխրանքի մեջ, մի՞թե չբացականչեց, «Հա յր, ոչ թե իմ կամքը, այլ բոլ Բն կամքը լինի» (Հովհ., ԻԲ, 42)։ Եւ իր կատարած բոլոր գործերի մասին մի՞թե չասաց, «Եւ երկնքից իցա ոչ թե իմ կամքը կատարելու համար, այլ կամքը Նրա, ով ինձ ուղարկեց» (Հովհ., 2, 38)։

Հիմա տեսնում են, եղբայր, թե ինչն է բանը։ Ենթադրում են, որ դու պատրաստակամ եւ ձգտում եւ հասնել այդպիսի կատարելության բարձունքին։ Օրհնությամբ արքայացրու թո համաձայնակողությունը։ Սակայն բո ընթացքի առաջին իսկ քայլիցից պատրաստ եղիք նաեւ գործերի, քրտիների ու պայքարի։ Ամեն ինչ պետք է գոհաբերես Աստուծոն եւ կատարես միայն Նրա կամքը։ Բայց ինչը հենց բո մեջ կգտնես այնքան ցանկություններ, որքան թո մեջ ուժ եւ պահանջ, մոռնեցիք կամ անկախ այն բանից, թե դրանք արդյո՞ք համաձայն են Աստուծո կամքին։ Այդ պատճառով թո փափագած նպատակին հասնելու համար նախ անհրաժեշտ է ճնշել սեփական ցանկությունները, եւ վերջիվերջ դրանք լրիվ մարել ու մեղմեցնել, իսկ դրան հասնելու համար պետք է անդադար ընդդիմանալ բո մեջ եղած չարին եւ ստիպել ինքը բեզ հակվել դեպի բարին, այլապես պետք է անդուր պայքար մղել ինքը եւ իր ամենի ինչ, ինչ նպատակն է թո ցանկություններին, բոլորքդ եւ սատարում դրանց։ Այդ, նախապատրաստվիր նման պայքարի ու այդպիսի պատերազմի եւ իմացիք, որ թո փափագած նպատակին հասնելու համար պարկ տրվում է միայն անձնուրից մարտնչողներին ու ռազմիկներին։ Բայց որքան էլ այս պատերազմն ամենազոհաբեր է բոլորից, քանի որ ինքներս մեզ հետ պատերազմի մեջ մտնելով՝ ինքներս մեր մեջ ենք հանդիպում հակառակորդներին, այնքան էլ այդ պատերազմն սուտ տարած հարաբերական ամենափառապանքն է բոլորից եւ գլխա-

վորը՝ ամենաընդունելի Աստուծո համար։ Եւ երբ նախաձեռնվողությունը լիարժեք խոնարավալով հաղթես ու մահացնես թո տարատեսակ կրքերն ու ցանկությունները, ապա առավել հաճելի կլինես Աստուծո Նրա համար կաշխատես ավելի գեղեցիկ, քան երբ ինքը բեզ արդուներու չափ հարաբանես եւ պահեցողությամբ հյուժես ավելի, քան հնազանդյուն անպատրաստակները։ Նույնիսկ, երբ դու, հարյուրավոր քրիստոնյա ստրուկների անօրենների ձեռքից փրկելով, ազատություն տաս, չես փրկվի, երբ դու միաժամանակ մոռնում եւ կրքերի գեղությունը մեջ։

Շնորհաբանաբան ինչպիսի գործ է, նույնիսկ մեծագույն գործ, որ ձեռնարկես, եւ ինչպիսի դժվարությամբ ու գոհողությամբ էլ որ այն իրագործես, միեւնոյն է, բեզ չի հասցնի այն նպատակին, որին կցանկանաս իր հասնելը, երբ, այդուհանդերձ, անուշադրության մասնակց եւ կրքեր, նրանց ազատություն տալով արդյունքի եւ գործելու թո մեջ։

Վերջապես, այն բանից հետո, երբ դու իմացաք, թե որն է քրիստոնեական կատարելությունը, եւ որ դրան հասնելու համար բեզ անհրաժեշտ է անդադար ու դաժան պատերազմ մղել ինքը թո դեմ։ Երբ ճշմարտության ցանկանում ես հաղթող լինել այդ աներկության պատերազմում եւ արժանի լինել պատվարձան պատկան, ապա պետք է թո սրտում կերտես հետևյալ չորս հոգեւոր գործը եւ պատրաստությունը կարծես հանդերձավորվելով ամենամեծի գեղեցիկը՝ ամենաբարեհարթ եւ ամենահաղթ, հատկապես

ա, երբեք ոչնչում հույս չունել սեփական անձը վրա, բ, ապավինել միայն Աստուծոն, գ, անդադար աշխատել՝ հոգեպես կերտելով սեփական անձը, դ, միշտ լինել աղոթքի մեջ։

Թարգմանությունը տառերին հիմնված է ՎԱՅՆԻՅԱՆԻ

ՀԱՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԾՈՂՈՎԻ ԷԿՍԵՆՍԱՐԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակված 1700-ամյակի տոնակատարության առիթով 2000 թ. մարտի 2-5-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Օշականում եւ Շաղկապոսում տեղի ունենում է Հայոց եկեղեցի-պետություն միջազգային գիտաժողովը։ Հիտաժողովին մասնակցեցին շուրջ վարսուն հոգեւորականներ, աստվածաբաններ եւ գիտականներ Հայաստանի Հանրապետությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Ֆրանսիայից, Անգոլայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներին, Դանիայից եւ Լիբանանից։ Լսվեցին զեկուցումներ՝ նվիրված Հայաստանում եւ տարբեր երկրներում եկեղեցու եւ պետության հարաբերությունների պատմական եւ արդի փորձին։ Գիտաժողովը, ամփոփելով ընթացած հայտերի արդյունքները, որոշեց Հայաստանի Հանրապետության պետական մարմինների եւ Ամենայն Հայոց Հայրապետի ուղարկությանը ներկայացնել հետևյալ առաջարկությունները։

1. Մեկ ազգ՝ մեկ եկեղեցի սկզբունքի հիման վրա իրազեկել Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Միջուղի հայության միասնությունը։

2. Հիմնվելով «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (մաս-

նավորապես հոդված 17) վրա, որով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ճանչվում է «որպես հրաժողովրդի ազգային եկեղեցի, նրա ժողովրդի կյանքի չինություն եւ ազգայնապետական կարելուր պատկար», ինչպես նաեւ, հաշվի առնելով Հայոց եկեղեցու ստանձնած առաքելությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ մտցնել համապատասխան հոդված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի իրավասությունների օրենսդրական դաշտը հստակեցնելու եւ իրենավորելու նպատակով։

3. Հայոց եկեղեցու բնեւորում վերականգնել եւ հետեւողականներին իրականացնել ծխական կարգը, ժողովրդի մեջ Հայոց եկեղեցու առաքելության անմիջական իրազեկումն համար։

4. Երիտասարդ սերնդի ազգայնապետական կրոնական իրավասությունների իրականացումը «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (մասնավորապես հոդված 17) հիման վրա։ Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին» օրենքում ամրագրված դրույթը, ըստ որում՝ կրթության գործին «իր նպատակն է քերտն Հայ եկեղեցին» (հոդված 4.3), հստակեցնել, որ կրթական համակարգում հայ ժողովրդի հոգեւոր եւ մտավոր ներու-

ծի ամրապնդումն նպատակաւորված գործունեությունը Հայ եկեղեցու ձեռնարկն է։

5. Բանակային հոգեւոր իովություն հաստատումով ապահովել Հայոց եկեղեցու գործունեականությունը Հայոց բանակի հոգեւոր եւ քաղաքական գործընթացում։

6. Միջնորդել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առջեւ, որպեսզի գնահատական տա Հայկական խորհրդային Մոցիախտական Հանրապետության կատարելության Հայոց եկեղեցու եւ հոգեւորականության նկատմամբ գործադրած թոնությունների եւ հալածանքների քաղաքականության մասին։ Հունիսի 14-ին, ի թիվս խորհրդային իշխանության կողմից թոնադատվածների, հարգանքի րոնք մատուցել հալածանքների գոհ դարձած հայ հոգեւորականների իշխանական։

7. Վերականգնել Հայ եկեղեցու սեփականատիրական իրավունքը եկեղեցիների, վանքերի եւ նրանց հարակից տարածքների նկատմամբ։

8. Խրախուսել եւ գորակից կանգնել Հայոց եկեղեցու քաղաքացիական եւ խնամատարական գործունեությանը։ Պետականորեն ապահովել Հայ եկեղեցու «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քաղաքացիական եւ քաղաքական գործունեությունը։

1700-ամյակի գրասենյակ

Ընտրի՞ր սրտամուտ տաքերակը կամ առաջարկի՞ր ա
տաքերակներ:

